

ԿԱՆՈՒՅՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 23 Սեպտեմբեր 2018

Բ. Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին / ԹԻԻ 77

Բարեկենդան Վարագայ Սուրբ Խաչի

Dimanche 23 septembre 2018

2ème Dimanche après la Sainte Croix / NO. 77

Prémices de la Sainte Croix de Varak



Today's Bible Readings:

2. Corinthians 10.18-11.1-10 / Mark 10.1-12 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

2. Corinthiens 10.18-11.1-10 | Marc 10.1-12 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԲԱՐՍԵՂ ԲՅՆՅ. ՎԱՆԼԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE PARSEGH VANLIAN

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn.

Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan, Acolytes: Michael Arabian, Armen

Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Sarkis Barsemian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS



2. ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 10.18-11.1-10

18. որովհետեւ գնահատելի է ո՛չ թե ան՝ որ ինքզինք կը յանձնարարէ, հապա ան՝ որ ՏԷ՛րը կը յանձնարարէ:

1Երանի՛ թե կարենայիք քիչ մը հանդուրժել իմ անմտութեանս. եւ իսկապէս՝ հանդուրժեցէ՛ք ինծի: **2**Որովհետեւ նախանձախնդիր եմ ձեզի հանդէպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մէկ ամուսինի նշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի՛ ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս: **3**Բայց կը վախնամ որ, ինչպէս օձը խաբեց Եւան իր խորամանկութեամբ, նոյնպէս ձեր միտքերը ապականին Քրիստոսի հանդէպ եղած պարզամտութենէն: **4**Որովհետեւ եթէ մէկը գար եւ քարոզէր ուրի՛շ Յիսուս մը՝ որ մենք չենք քարոզած, կամ ստանայիք ուրիշ հոգի մը՝ որ չէք ստացած, կամ ուրիշ աւետարան՝ որ չէք ընդունած, լաւ կը հանդուրժէիք այդպիսիին: **5**Քանի որ ես կը սեպեմ թէ ոչինչո՛վ ետ մնացած եմ գերագոյն առաքեալներէն. **6**ու թեպէտ անվարժ եմ խօսքի մէջ, բայց ո՛չ՝ գիտութեամբ. սակայն ամէն բանի մէջ մենք մեզ ամբողջովին բացայայտեցինք ձեզի: **7**Միթէ սխա՛լ գործած եղայ ես զիս խոնարհեցնելով՝ որպէսզի դո՛ւք բարձրանաք, քանի որ ձրի քարոզեցի ձեզի Աստուծոյ աւետարանը. **8**կողոպտեցի ուրիշ եկեղեցիներ՝ թոշակ առնելով անոնցմէ, որպէսզի սպասարկեմ ձեզի: **9**Ձեր մէջ ներկայ եղած ատենս՝ երբ կարօտութեան մէջ էի, ձեզմէ ո՛չ մէկուն բեռ եղայ. որովհետեւ Մակեդոնիայէն եկող եղբայրները լրացուցին ինչ որ կը պակսէր ինծի. եւ ամէն կերպով զգուշացայ ձեզի ծանրութիւն ըլլալէ, ու դարձեալ պիտի զգուշանամ

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10.1-12

1Կանգնելով՝ անկէ գնաց Յրեաստանի հողամասը, Յորդանանի միւս եզերքէն: Դարձեալ բազմութիւնները անոր շուրջ կը համախմբուէին, եւ ինչպէս սովորութիւն ունէր՝ դարձեալ կը սորվեցնէր անոնց: **2**Փարիսեցիները եկան անոր քով ու հարցուցին՝ փորձելու համար զայն. «Արտօնուա՛՞ծ է մարդու մը՝ որ արձակէ իր կինը»: **3**Ան ալ պատասխանեց անոնց. «Մովսէս ի՞նչ պատուիրեց ձեզի»: **4**Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց ամուսնալուծումի

վկայագիր մը գրել եւ արձակել»: **5**Յիսուս պատասխանեց անոնց. «Ձեր սիրտին կարծրութեան համար գրեց ձեզի այդ պատուէրը. **6**բայց արարչութեան սկիզբէն՝ Աստուած զանոնք արու եւ էգ ստեղծեց: **7**“Այս պատճառով մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, **8**ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին”: Ուստի ա՛լ երկու չեն, հապա՛ մէկ մարմին. **9**ուրեմն մարդը թող չզատէ ինչ որ Աստուած իրարու միացուցած է»:

10Տունը՝ իր աշակերտները դարձեալ նոյն բանը հարցուցին իրեն: **11**Ըսաւ անոնց. «Ո՛վ որ արձակէ իր կինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ անոր դէմ: **12**Ու եթէ կին մը արձակէ իր ամուսինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ»:

2. Corinthians 10.18-11.1-10

18 For not he that commended himself is approved, but whom the Lord commended. **1** Would to God ye could bear with me a little in my folly: and indeed bear with me. **2** For I am jealous over you with godly jealousy: for I have espoused you to one husband, that I may present you as a chaste virgin to Christ. **3** But I fear, lest by any means, as the serpent beguiled Eve through his subtilty, so your minds should be corrupted from the simplicity that is in Christ. **4** For if he that cometh preached another Jesus, whom we have not preached, or if ye receive another spirit, which ye have not received, or another gospel, which ye have not accepted, ye might well bear with him. **5** For I suppose I was not a whit behind the very chiefest apostles. **6** But though I be rude in speech, yet not in knowledge; but we have been thoroughly made manifest among you in all things. **7** Have I committed an offence in abasing myself that ye might be exalted, because I have preached to you the gospel of God freely? **8** I robbed other churches, taking wages of them, to do you service. **9** And when I was present with you, and wanted, I was chargeable to no man: for that which was lacking to me the brethren which came from Macedonia supplied: and in all things I have kept myself from being burdensome unto you, and so will I keep myself. **10** As the truth of Christ is in me, no man shall stop me of this boasting in the regions of Achaia.

Mark 10.1-12

10 And he arose from thence, and comed into the coasts of Judaea by the farther side of Jordan: and the people resort unto him again; and, as he was wont, he taught them again. **2** And the Pharisees came to him, and asked him, Is it lawful for a man to put away his wife? tempting him. **3** And he answered and said unto them, what did Moses command you? **4** And they said, Moses suffered to write a bill of divorcement, and to put her away. **5** And Jesus answered and said unto them, For the hardness of your heart he wrote you this precept. **6** But from the beginning of the creation God made them male and female. **7** For this cause shall a man leave his father and mother, and cleave to his wife; **8** And they twain shall be one flesh: so then they are no more twain, but one flesh. **9** What therefore God hath joined together, let not man put asunder. **10** And in the house his disciples asked him again of the same matter. **11** And he said unto them, whosoever shall put away his wife, and marry another, committed adultery against her. **12** And if a woman shall put away her husband, and be married to another, she committed adultery.





Հոգեւոր Հովիւի Օրուան Խօսքը



«Մահը, թագաւորելով Ադամէն մինչեւ Քրիստոսի գալուստը, արդարութեան Արեգակի ծագելուն պէս խորտակուեցաւ»:

(Յովհաննէս Երզնկացի-Պլուզ)

Սիրելի՛ բարեկրօն հաւատացեալներ,

Անցեալ Կիրակի նշեցինք Խաչվերացի տօնը՝ յիշելով Պարսկական գերութենէն Տիրոջ Խաչափայտի ազատագրման եւ Երուսաղէմ վերադարձի հրաշալի իրադարձութիւնը, եւ ինչպէս հաստատուած է մեր Մայր Եկեղեցւոյ օրացոյցին մէջ՝ իւրաքանչիւր տաղաւար տօնին յաջորդ օրը մեռելոց կը կոչուի, ուստի, անոր յաջորդ օրը Հայոց բոլոր եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Հոգեհանգստեան կարգ կամ Սուրբ Պատարագ՝ ի Քրիստոս ննջած մեր հաւատացեալ ու առաքինասէր հարազատներու յիշատակութեան համար: Եւ ըստ որուն որոշեցի ննջեցելոց վերաբերեալ խոհերս եւ մտածումներս փոխանցել որպէս օրուայ պատգամ:

Սիրելի՛ հաւատակից եղբայրներ եւ քոյրեր, «Աստուած մեռելներու Աստուածը չէ, այլ՝ ողջերու, որովհետեւ բոլորը անոր համար կենդանի են», - կ'աւետէ Տէր Յիսուս Քրիստոս Ղուկասի աւետարանին մէջ (20:38): Եւ մենք, որպէս յաղթանակած եւ յարուցեալ Աստուծոյ հետեւորդներ, գիտենք, որ կեանքը ամենեւին ալ տարիներու խեղճուկ թիւով սահմանափակուած երկրային այս ժամանակաշրջանը չէ՛, որ կ'աւարտի սառն ու անշունչ գերեզմանաքարով, այլ իրական, յաւիտենական կեանքը կը սկսի մահուան եզրագիծէն անդին, երբ մարդու անմահ ու աստուածապատկեր հոգին կ'ազատուի իր ժամանակաւոր թաղանթէն եւ կ'երթայ միանալու իր Արարիչին: Ասկէ աւելի յուսադրող պատկեր կ'երեւի դժուար է պատկերացնել, սիրելի՛ հաւատացեալներ, սակայն, եկուր եւ տես, որ մահուան լուրը, որ միշտ անսպասելի ու անժամանակ կը թուի, անասելի կը դառնացնէ եւ կը վշտացնէ մեր սիրտերը: Մահը կու գայ անորսալի գողի պէս եւ իր հետ կը տանի մեր թանկագին, մեր սիրելի մարդոց: Չաւակը կորսնցուցած ծնողքի

արցունքները այդպես ալ չեն չորնար մինչեւ կեանքի վերջը, նոյնպես՝ իր ծնողքը կորսնցուցած զաւակի մը սրտին մէջ միշտ ալ կը մնայ որբութեան դառնութիւնը... Յաւի զգացումը կը մնայ բոլորի հոգիներուն մէջ, մեկուն մօտ քոյր, միւսին՝ եղբայր, ամուսին կամ կին անուններով տարբերելով միայն: Եւ եթէ հաւատքը տկարացած է մարդու սրտին մէջ կամ ամենեւին կը բացակայի, ապա ան միս-միսակ կը մնայ հոգին կրծող ու մաշող ցաւի հետ դեմ յանդիման: Իսկ քանի որ հոգին շատ աւելի նուրբ է ու զգայուն՝ մարմնին համեմատութեամբ, ապա հոգեկան ցաւը բազմապատիկ անտանելի կը դառնայ մարմնական ցաւէն: Եւ մարդուն այլ ելք չմնար, քան խելագարուիլ ու յուսահատիլ այդ ցաւէն, կամ մխիթարութեան ուղիներ փնտռել՝ ան մեղմելու համար: Չեմ ուզեր թուարկել այն կարծեցեալ ուղիները, որ կը գտնէ անհաւատք մարդը, քանզի բոլորդ ալ գիտեք, սիրելիներ՝ որ անոնք խաբուսիկ են, փուճ ու ժամանակաւոր, եւ ի վերջոյ կը բերեն ցաւի այն նոյն կետին, որմէ, որ մարդը կը փորձէր ազատուիլ:

Այսօր, կ'ուզեմ խօսիլ այն իրական, միակ, ճշմարիտ ու յաւիտենական մխիթարութեան մասին, որ միայն ճշմարիտ Աստուած կը պարգեւէ: Եւ զուր չէ, որ այս մասին որոշեցի ճիշդ խաչվերացի մեռելոցին անդրադառնալ, քանի որ ինչպէս Աւանդութիւնը կը պատմէ՝ Տիրոջ խաչափայտը իր ողջ ճամբուն վրայ աննկարագրելիօրէն կը մխիթարէր եւ կ'ոգեւորէր բոլոր բարեպաշտ հաւատացեալներուն, եւ եթէ անցեալ Կիրակի եւս ներկայ գտնուեցաք Սուրբ Պատարագին եւ հաղորդակից դարձաք տօնին, ապա որոշ չափով հաղորդակից դարձաք նաեւ՝ եօթներորդ դարուն տեղի ունեցած այդ սքանչելի իրադարձութեան, ականատես ըլլալով հաւատացեալներու ուրախութեան եւ մխիթարուիլ այն իրական մխիթարութեամբ, որ հնարաւոր է այդ ունենալ միայն ճշմարիտ հաւատքով:

«Սպասէ՛ Տիրոջը ու քաջալերուի՛ր, սիրտդ թող ամրապնդուի, Տիրո՛ջը սպասէ», - կը սաղմոսերգէ Դաւիթ Մարգարէն (Սղմ. 26:14): «Օրհնեալ է Աստուած եւ Հայրը մեր Տէր Յիսուս Քրիստոսին, Հայրը գթութիւններու եւ Աստուած ամենայն մխիթարութեան, որ կը մխիթարէ մեզի մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք ալ կարողանանք մխիթարել անոնց, որոնք ամեն տեսակ նեղութիւններու մէջ են, այն մխիթարութեամբ, որուն շնորհիւ մենք կը մխիթարուինք Աստուծմէ», - կ'ըսէ Պօղոս Առաքեալը Կորնթացիներուն ուղղուած իր երկրորդ նամակին մէջ (1:3, 4): «Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի. լաւ է ձեզի համար, որ ես երթամ. որովհետեւ, եթէ ես չերթամ, Մխիթարիչը ձեր մօտ չգար. իսկ եթէ երթամ, անոր կ'ուղարկեմ ձեր մօտ», - կը քաջալերէ Տէր Յիսուս Քրիստոս (Յովհ. 16:7) եւ կ'աւելցնէ. «Ես իսկ եմ յարութիւնն ու կեանքը. ան որ կը հաւատայ ինծի, թեպէտ եւ մեռնի, կ'ապրի» (Յովհ. 11:25):

Տիրոջ սուրբ շրթունքներեն հնչած քաջալերանքի այս խօսքերը, Սուրբ Հոգիին ներշնչումով գրուած սուրբ գրային մեջբերումները աւելի քան բաւական են, որպէսզի ճշմարիտ Քրիստոնեայի սիրտը առ Աստուած յոյսով եւ մեծ մխիթարութեամբ լեցուի: Այո՛, սիրելիներ՛, մահը կը բաժնէ: Ան կը բաժնէ մեզ մեր սիրելիներեն ու հարազատներեն՝ կորուստի անասելի ցաւ ու դառնութիւն պատճառելով, երազանքներ ու յոյսեր խորտակելով, սակայն պիտի յիշենք, որ նախ այդ սոսկ ժամանակաւոր բաժանում է, քանի որ բոլորս ալ յարութեան յոյսն ունինք, ապա՝ մենք երբեք միևնաճակ չենք մեր ցաւին հետ: Մենք անսահման սիրող ու հոգատար Երկնային Հայր ունինք, որ Իր Սուրբ Հոգիին մխիթարութեամբ կը սրբէ մեր արտասուքը ու կը մեղմացնէ հոգիին ցաւը: Մենք անչափ գորովալից Երկնային Մայր ունինք, որ շարունակ կ'աղաչէ մեզի համար եւ կը բարեխօսէ իր Միածինին առջեւ, եւ որուն Սուրբ հայրերը, իրաւամբ, տառապեալներու Պատասպարան կը կոչուին: Եւ եթէ դուք երբեւէ մխիթարութեան ու սփոփանքի աղերսով դիմած էք Ողորմութիւններու Տիրոջը կամ Բարեգութ Աստուածածինին, ապա վստահաբար միանգամընդմիշտ զգացած էք ձեր խնդրանքին պատասխանը:

Հաւատացեալներեն մեկը կը պատմեր, որ երբ առաջին անգամ Երուսաղէմի մէջ, Տիրոջ գերեզմանին մօտ Սուրբ Պատարագի մասնակցած է, յանկարծ այնպիսի ուժով կը գիտակցի իր մեղաւորութեան մասին, որ սիրտը կը լեցուի այնպիսի ցաւով եւ հոգին այնպէս տակնուկրայ կ'ըլլայ, որ բաւական երկար ժամանակ անզուսպ կը հեկեկայ: Անոր համակած ցաւը երթալով կը զօրանայ, եւ որոշ ժամանակ վերջ կը զգայ, որ սիրտը ուր որ է պիտի պայթի այդ վիշտէն: Ոչ մէկ աղօթք այլեւս չի յիշեր, ուստի կերպով մը կը հաւաքէ միտքը ու կ'աղաչէ Աստուծոյ՝ ըսելով. «Տէ՛ր, ողորմէ՛ ինծի եւ մխիթարէ՛, քանի որ սիրտս ուղղակի պատառ-պատառ կ'ըլլայ»: Եւ կ'ըսէ, դեռ միտքը աւարտած չէր, երբ կը զգայ թէ՛ ինչպէս դադրած է արցունքներու հոսքը, եւ աննկարագրելի թեթեւութեան ու խաղաղութեան զգացումով կը լեցուի սիրտը:


«Խնդրեցէ՛ք Աստուծմէ, եւ ան կու տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ կը գտնէք, բախեցէ՛ք, եւ կը բացուի ձեր առջեւ» (Մտթ. 7:7): Տիրոջ օգնութիւնը երբեք չուշանար, սիրելի՛ հաւատացեալներ: Բաւական է միայն մեր բեկեալ սիրտերը Անոր հոգածութեան յանձնենք եւ անմիջապէս կը զգանք, թէ ինչպիսի սիրով ու քաղցրութեամբ անոնք կը լեցուին: «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզի կը հանգստացնեմ», - կը կանչէ Բարեգութ Տէրը (Մտթ. 11:28): Սակայն, այս բոլորէն առաջ պիտի յիշենք, որ մեր վիշտը սգալէն, մեր մխիթարութենէն շատ աւելի կարեւոր բան մը կայ, որ պիտի ընենք հարազատի մահուան դէպքին: Անկաւ անդադար աղօթքն ու ողորմութեան գործերն են անոր հոգիի հանգստութեան համար: Եկեղեցին զուր չէ, որ կարգած է հոգեհանգստեան եւ մեռելոցի Պատարագները: Քանի

որ մեր հարազատները հոն նոյնքան եւ առաւել մեր խնամքին ու օգնութեան կարիքը ունին, որքան հոս՝ երկրային կեանքին մէջ: Հոս անոնք ժամանակ ունենին իրենց մեղքերուն համար զոյջալու եւ ապաշխարելու, իսկ հոն այդ հնարաւորութիւնը այլեւս չունին: Ուստի, անոնց կը մնայ միայն յուսալ եկեղեցւոյ եւ իրենց սիրող ու յիշող մարդոց աղօթքներուն, քանի որ մեր ջերմեռանդ աղօթքներն ու վասն հոգւոց իւրեանց ողորմութիւններն են, որ կ'երթան անոնց օգնելու օդային իշխանութիւններու միջոցով եւ Ամենակալին առջեւ կանգնելու ընթացքին: Միայն անոնք ի գօրու են թերեւցնելու անոնց վիճակը, սրբել այդ ոչ ծանր մեղքերը, որոնց պատճառով չեն կրցած ապաշխարել: Եւ ան շատ մեծ ու չափազանց կարեւոր օգնութիւն է մեր կողմէն տրուած, քանի որ սիրող սրտէ բխած աղօթքը ի գօրու է Տիրոջ բարկութիւնը մեղմել եւ ողորմութիւն ակնկալել Անկէ:

Կը պատմեն, որ վանքերէն մեկուն մէջ վանականի մը մահէն ետք, թաքցուած ոսկի կը գտնեն անոր խցիկին մէջ: Վանահայրը կը կարգադրէ անոր վանքի գերեզմանոցէն դուրս թաղել եւ ոսկին ալ լեցնել գերեզմանին վրայ, որպէսզի միւս վանականներուն համար ալ խրատ ըլլայ: Սակայն երեսուն օր յետոյ վանահայրը անասելի ցաւ կը զգայ այդ մոլորեալ հոգիին համար եւ երեսուն հոգեհանգստեան կարգ կը կատարեն ու բոլոր եղբայրներով ջերմեռանդօրէն կ'աղօթեն, որպէսզի անոր վիճակը քիչ մը թերեւնայ: Անկէ ետք, այդ վանականը տեսիլքով կը յայտնուի վանահօր եւ կ'ըսէ. «Մինչ այժմ սարսափելի կը տանջուէի, բայց հիմա լաւ եմ ու լոյսի մէջ կը գտնուիմ»:

Ահա՛, այս պատճառով շատ կարեւոր է, որ չմոռնանք մեր ննջեցեալ մտերիմներուն, սիրելի՛ հաւատացեալներ, այլ մեր անկեղծ աղօթքներով եւ անոնց անունով եղած ողորմութիւններով աշխատինք թերեւցնել այն վիճակը, որուն մէջ անոնք կը գտնուին: Եւ մենք ալ սուրբ եւ արդար կեանքի ձգտինք, մաքրենք մեր սիրտերն ու Տէր Յիսուս Քրիստոսին հրաւիրենք այնտեղ բնակելու, որպէսզի չվախնանք մահէն, այլ երբ գայ այս կեանքէն միւսը փոխադրուելու ժամանակը, մահը ապաշխարած գտնէ մեր հոգիներն ու դառնայ մեր սիրելի Տիրոջը միաւորուելու եւ Անոր երանելի լոյսին մէջ խաղաղութեամբ հանգրուանելու միջոցը միայն: Ամեն:

**Օրհնութեամբ՝
Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան**



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆԸ

Ով անճառելի բնութիւն, արարչակից եւ համագոյ, միասնական Սուրբ Երրորդութիւն, զոր դաւանելու մէջ երբեք չերկմտեցայ, զոր սիրեցի եւ կը պաշտեմ իմ մանկութենէս, որու փրկութեան յոյսը զիս կ'ուրախացնէ, զոր յիշելով միշտ կը մխիթարուիմ զիս խեղդող խաւարային տրտմութենէս:

Այցելէ քու ծառայիդ, որպէսզի առիթ չտրուի նենգաւոր սատանային պարծենալու իմ հանդէպ յաղթութեամբ:

Օգնական եղիր ինձի, մանաւանդ երբ իմ դէմս կը պատերազմի նենգ թշնամին, որովհետեւ իմ մարմնի եւ մտքի ուժս տկար է անոր չար խորհուրդներուն առջեւ:

Քեզմով մարտնչելովս, սակայն, կը տկարանայ վիշապը եւ ամօթահար կը հեռանայ, եւ ես Քու շնորհիւդ կը կենամ գլուխս բարձր եւ բերկրութեամբ լեցուն, որովհետեւ անհնար է որ Քեզ կրողները եւ Քու անունովդ խրախուսուողները չյաղթեն չարին, այդպիսով իրապէս արժանի դառնալով կոչուելու քու ծառաներդ:

Թող իմ բերանս լեցուի գոհութեամբ օրհնելու Քու փառքդ, Ամենասուրբ Երրորդութիւն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



PRIÈRE A LA SAINTE TRINITÉ

Ô nature merveilleuse, consubstantielle au Créateur, Trinité Sainte et une, que je n'ai jamais manqué de confesser, que j'ai aimée, et que je sers depuis mon enfance, dont l'espérance du salut me réjouit toujours, qui me console toujours de la morosité étouffante et

enténébrée lorsque je l'invoque, visite ton serviteur, afin d'empêcher le Malin de se glorifier de m'avoir terrassé. Fortifie-moi et surtout, combats pour moi ce champion implacable et cruel, car mon corps et mon esprit sont faibles face à ses mauvais desseins. Mais lorsque je lutte à tes côtés, le dragon s'affaiblit et, honteux, disparaît, et moi, grâce à Toi, je garde la tête haute et suis rempli de joie, puisque ceux qui Te portent et qui sont encouragés par l'invocation de ton Nom peuvent le vaincre, et que, ceci étant accompli et scellé en vérité, je suis digne d'être appelé ton serviteur.

Que ma bouche s'emplisse alors de louanges, afin de bénir ta gloire, Père véritable de ton Fils Unique, Verbe incarné du Père, Seigneur et Saveur du monde, Saint-Esprit de Dieu, communiant au Père et au Fils dans toutes les grandeurs et toutes les œuvres, identique en nature, vrai Dieu de Dieu, maintenant et toujours et dans l'éternité de l'éternité. Amen.





Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Feast de l'église pour la Semaine Prochaine

Սեպտեմբեր – Septembre

**Բարեկենդան Վարագայ Սրբոյ Խաչին
Prémices de la Sainte Croix de Varak**

24, Երկուշաբթի – Պահք:

*Տօն Սրբոցն Մամասայ, Փիլիկտիմոնի
եւ Սիմէօնի Սիւնակեցւոյն:*

Lundi 24 – Jeûne.

Fête de St Mamas, Philigdimon et Siméon le Stylite.

25, Երեքշաբթի - Պահք:

*Տօն Սրբոց Կուսանացն Փեփրոնեայ, Մարիանայ
եւ Շուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ:*

Mardi 25 - Jeûne.

**Fête des Stes vierges Pépronine, Mariana
et de Chouchane, filles du Grand Vartan.**

26, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 26 - Jeûne.

27, Հինգշաբթի – Պահք:

*Տօն Սրբոց Հայրապետացն Բարադամու,
Անթիմոսի եւ Երանոսի:*

Jeudi 27 - Jeûne.

Fête des Saints patriarches Baralam, Anthimos et Eranos.

28, Ուրբաթ - Պահք:

Vendredi 28 - Jeûne.

29, Շաբաթ – Տօն Սրբոցն Գեորգայ

Քաջամարտիկ զօրավարին, Անդոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին:

**Samedi 29 – Fête du brave général St Georges,
d'Adoktos et du chantre Romanos.**


ՏՕՆԵՐ

Կիրակի, 23 Սեպտեմբեր 2018

Բարեկենդան Վարազայ Սուրբ Խաչին

Հայ Եկեղեցին Սուրբ Խաչը կը տօնէ բազմաթիւ առիթներով: Ինչպէս անելի առաջ յիշուեցաւ՝ «Խաչվերաց», «Գիւտ Խաչ», «Երեւման Խաչ» եւ «Վարազայ Խաչ», որոնք ունին իրենց պատմական հիմերը:

Այս խաչի տօներէն, Վարազայ Սուրբ Խաչի տօնը, այս տարի կը տօնուի 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, Կիրակի օր:



Վարազայ Սուրբ Խաչի տօնը պատմականօրէն կապուած է Ս. Հռիփսիմէ կոյսին հետ: Ուրեմն կ'արժէ յիշել նախ Ս. Հռիփսիմէ եւ իր հետ նահատակուող կոյսերը, որպէսզի կարելի ըլլայ հասկնալ Վարազայ Խաչին կարեւորութիւնը եւ իմաստը:

Ըստ Զ. Հ. Հանրագիտարանի տեղեկութիւններուն, որ հեղինակուած է ԼԵՆՆ Սարգսեանի կողմէ, Ս. Հռիփսիմեանց եւ Ս. Գայանեանց կոյսեր՝ Զրիստոնեայ վկայուիներ, նահատակներ են: Հռիփսիմեանց կոյսերը առաքինազարդ վանական կեանք կը վարէին Հռոմի մէջ, իրենց մայրապետի՝ Գայիանէ կոյսի առաջնորդութեամբ: Հռոմեական Դիոկղետիանոս կայսրի (284-305) հալածանքներէն խուսափելով՝ ի վերջոյ ապաստանած են Հայաստան՝ Վաղարշապատի Հնձանք կոչուած վայրը:

Աւանդութիւնը, հալածանքներու պատճառ կը համարէ այն՝ որ կոյսերէն գեղեցկագոյնը՝ «երկնաւոր հարս» Հռիփսիմէն հրաժարած է Դիոկղետիանոս կայսրի առաջարկներէն՝ դառնալու անոր կինը եւ Հռոմեական կայսրութեան թագուհին:

Ուստի կայսրը լուր կը դրկէ Հայոց Տրդատ Գ Մեծ թագաւորին, որ գտնէ Հայաստան ապաստանած կոյսերը եւ վերադարձնէ Հռոմ, բայց եթէ կ'ուզէ, կրնայ կնութեան առնել Հռիփսիմէն: Տրդատ թագաւոր կը գտնէ կոյսերը եւ տեսնելով Հռիփսիմէի գեղեցկութիւնը, ինքն ալ կ'ուզէ կին առնել զայն:

Հռիփսիմէ կը հրաժարի դարձեալ:

Եւ այս պատճառով Յռիփսիմէ կ'ենթարկուի չարչարանքներու, կը կտրուի լեզուն, աչքերը կը փորուի եւ մարմինը կ'այրուի:

Յռիփսիմէ կոյսին նահատակումը, այս կերպով կը պատահի Վաղարշապատ՝ 301 թուականին:

Այս հակիրճ տեղեկութիւնէն յետոյ, տեսնենք, թէ ի՞նչ կ'ըսէ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Վարազայ Խաչի մասին՝ իր «Ծիսական բառարան»ին մէջ:

«Խաչի հրաշալի երեւումներէն Յունաց Եկեղեցին ունի Երուսաղէմի երեւումը 351-ին, իսկ Յայոց Եկեղեցին Վարազայ երեւումը 653-ին:

«Մենք ալ կը կատարենք Երեւման Խաչին տօնը, եւ Յինանց Ե. կիրակին՝ Չատկէն 28 օր ետքը:

«Իսկ Վարազայ երեւումը տեղի ունեցաւ Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսի օրով, որ այդ երեւման տօնն ալ հաստատեց:

«Ս. Յռիփսիմէ իր հետ ունեցած է բուն Խաչափայտէն մաս մը՝ զոր ի վերջոյ պահած է Վարագէն վեր գտնուող Գալիլիա կոչուած ժայռին մէջ: Եւ այդ Խաչափայտի մասը՝ լուսաւոր տաճարի տեսիլքով յայտնուած է Թողիկ ճգնաւորին, եւ տեղէն ելլելով՝ եկած հանգչած է Վարազայ վանքին եկեղեցին, ու առաջ Թողիկ ու Յովէլ ճգնաւորները եւ յետոյ բոլոր շրջակայ գիւղերէն եւ Վան քաղաքէն եկող ուխտաւորներ տեսած ու պաշտած են:

«Խաչափայտին գիւտը 327-ին տեղի ունեցաւ. իսկ Ս. Յռիփսիմէի մարտիրոսութիւնը 301-ին կատարուած ըլլալով՝ Խաչի գիւտէն առաջ Խաչափայտի մասունքին գոյութիւնը կրնայ մեկնուիլ կրկին աւանդութիւններով: Որովհետեւ թէ՛ Տեառնեղբայր Յակոբոս առաքեալին համար կ'ըսուի թէ կրցած է մաս մը ձեռք ձգել Վերացման ատեն, եւ թէ՛ Պատրոնիկէ դշխոյի համար կը պատմուի թէ Կողոփոս կայսեր օրով (41-54) Խաչափայտի մասնաւոր գիւտ մը ընել յաջողած է:

«Վարազայ վանքին մէջ հանգչող Խաչափայտը աւելի սովորական կերպով կոչուած է Սուրբ Նշան, եւ Սուրբ Նշանի մասունքը մինչեւ 1021 մնացած է Վարագ, եւ նոյն տարին փոխադրուած է Սեբաստիա, 1026-ին դարձեալ Վարագ բերուած, 1651-ին Խոշաբ տարուած, իսկ 1655-ին Վանայ Ս. Տիրամայր Մայր-եկեղեցին դրուած՝ որ այնուհետեւ կոչուեցաւ Սուրբ Նշան: Հոն երկար ժամանակ մնաց Վարազայ Սուրբ Խաչը:

«Խաչի հրաշալի երեւումներէն Յունաց եկեղեցին ունի Երուսաղէմի երեւումը 351-ին, իսկ Յայոց եկեղեցին Վարազայ երեւումը 653-ին:

«Մենք ալ կը կատարենք Երեւման Խաչին տօնը, եւ Յինանց Ե. կիրակին՝ Չատկէն 28 օր ետքը:

«Իսկ Վարազայ երեւումը տեղի ունեցաւ Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսի օրով, որ այդ երեւման տօնն ալ հաստատեց:

«Ս. Յռիփսիմէ իր հետ ունեցած է բուն Խաչափայտէն մաս մը՝ զոր ի վերջոյ պահած է Վարազէն վեր գտնուող Գալիլիա կոչուած ժայռին մէջ: Եւ այդ Խաչափայտի մասը՝ լուսաւոր տաճարի տեսիլքով յայտնուած է Թողիկ ճգնաւորին, եւ տեղէն ելլելով՝ եկած հանգչած է Վարազայ վանքին եկեղեցին, ու առաջ Թողիկ ու Յովէլ ճգնաւորները եւ յետոյ բոլոր շրջակայ գիւղերէն եւ Վան քաղաքէն եկող ուխտաւորներ տեսած ու պաշտած են:

«Խաչափայտին գիւտը 327-ին տեղի ունեցաւ. իսկ Ս. Յռիփսիմէի մարտիրոսութիւնը 301-ին կատարուած ըլլալով՝ Խաչի գիւտէն առաջ Խաչափայտի մասունքին գոյութիւնը կրնայ մեկնուիլ կրկին աւանդութիւններով: Որովհետեւ Տեառնեղբայր Յակոբոս առաքեալին համար կ'ըսուի թէ՛ կրցած է մաս մը ձեռք ձգել Վերացման ատեն, եւ թէ՛ Պատրոնիկէ դշխոյի համար կը պատմուի թէ Կղոդիոս կայսրի օրով (41-54) Խաչափայտի մասնաւոր գիւտ մը ընել յաջողած է:

«Վարազայ վանքին մէջ հանգչող Խաչափայտը աւելի սովորական կերպով կոչուած է Սուրբ Նշան, եւ Սուրբ Նշանի մասունքը մինչեւ 1021 մնացած է Վարագ, եւ նոյն տարին փոխադրուած է Սեբաստիա, 1026-ին դարձեալ Վարագ բերուած, 1651-ին Խոշաբ տարուած, իսկ 1655-ին Վանայ Ս. Տիրամայր Մայր-եկեղեցին դրուած՝ որ այնուհետեւ կոչուեցաւ Սուրբ Նշան: Հոն երկար ժամանակ մնաց Վարազայ Սուրբ Խաչը:

«Վարազայ Սուրբ Խաչի տօնը կը կատարուի Վերացման Խաչէն 15 օր ետքը, այսինքն Սեպտեմբեր 25-էն մինչեւ Հոկտեմբեր 1 հանդիպող Կիրակին»:

Այսօր նաեւ Մարիամ, Մերի, Երանուհի, Սրբուհի, Պերճուհի, Մարի անուները կրողներու անուանակոչութեան տօնն է:

Ուստի, կը շնորհաւորենք այս անունները կրողներուն անուանակոչութիւնը:

Երկուշաբթի, 24 Սեպտեմբեր 2018

Մամասի, Փիլիպոսի և Սիմեոն Սիլևակեացի Յիշատակութան Օր



Ս. Մամասը ծնած է Պափլագոնիա նահանգի Գանգրա քաղաքը, աղքատ Քրիստոնեայ ընտանիքի մեջ: Քրիստոնեաներու դեմ հալածանքներու ժամանակ անոր ծնողքը եւս կը ձերբակալուին եւ կ'աքսորուին Կեսարիա: Բանտին մէջ Մամասի ծնելէն յետոյ, կը մահանայ անոր մայրը: Փոքրիկ Մամասին կ'որդեգրէ բարեպաշտ Քրիստոնեայ կին մը, որ կը սնուցանէ եւ կը դաստիարակէ անոր: Տասնհինգ տարեկանին, արդէն համոզուած

Քրիստոնեայ եւ համարձակ քարոզիչ ըլլալուն համար՝ կը ձերբակալուի եւ չարչարանքներու կը մատնուի: Չրկանքներէն ազատուելով՝ պարտադրուած կ'առանձնանայ Արգէոս լեռը: Ս. Մամասը իր ողջ կեանքին կը ծառայէ աղքատներուն, սակայն կրկին կը մատնուի, կը դատուի եւ խիստ չարչարանքներէ յետոյ 273 թուականին կը խոցուի եռաժանիով՝ եւ կը նահատակուի:

Ս. Փիլիպոսիմոնը, որ Յունական եւ Լատինական վկայաբանութիւններու մէջ յայտնի է Ֆիլոմէնոս անունով, ցորենի վաճառական էր, որ իր հաւատքին համար, Ս. Մամասի նման Աւրելիանոս կայսրի հալածանքներու ժամանակ կը ձերբակալուի, կտտանքներու կ'ենթարկուի եւ ի վերջոյ կը նահատակուի 274 թուականին՝ ոտքերը իրար եւ ձեռքերը գլխուն գամուած:



Ս. Սիմեոն Սիլևակեացը ծնած է 390 թուականին, Կիլիկիայ: Մանկութենէն եղած է հովիւ: Օր մը եկեղեցի մտած է եւ չհասկանալով Աւետարանի ընթերցուածին իմաստը, կը դիմէ ծերունիի մը, որ բացատրած է, թէ՛

խօսքը՝ ժուժկալ ըլլալու մասին է, այսինքն՝ մարդը ճգնութեամբ, զրկանքներով, ծոմապահութեամբ պէտք է երկինքի արքայութեան արժանանայ: Այս խօսքերուն վրայ խորհելով՝ Սիմէօնը գացած է Սուրիոյ Յաթա նահանգը, ուր 3 տարի վանքի մը մէջ առանձնանալէն յետոյ, Աստուծմէ քարոզելու եւ բժշկելու շնորհք ստացած է: Տեսնելով, որ այցելուներն ու հիւանդները իրեն շատ կը նեղեն, քարոզելու համար սկիզբը խոր փոս մը փորած է, այդտեղէն միայն գլուխը երեւցած է, ապա 60 կանգուն բարձրութեամբ սիւնի վրայ բարձրացած է: Գլխավերելին ծածկ չունենալով՝ ամբողջ օրը միայն կանգնած կամ ծունկի անցուցած է՝ իբրեւ սնունդ շաբաթը միայն մէկ անգամ Ս. Յաղորդութիւն ստացած է: Սիւնին վրայէն տարիներ շարունակ քարոզած է եւ իր աղօթքներով բժշկած է բազմաթիւ հիւանդներ:



Holidays

Sunday, September 23, 2018

Feast of the Holy Cross of Varak (Varaka Khatch)

On the second Sunday always after the Exaltation of the Holy Cross the Armenian Church celebrates the Feast of the Holy Cross of Varak (Varaka Khach) commemorating the third century placement of an authentic relic of the cross in Armenian soil at Varakavank.

All Christian Churches each year solemnly celebrate all feasts dedicated to the Holy Cross. The Armenian Apostolic Church, in difference to the other Christian Churches, celebrates another purely national feast dedicated to the Holy Cross, which is famous as the Holy Cross of Varak. The Armenian Church celebrates this feast two weeks after the Feast of Exaltation of the



Holy Cross, that is - the Sunday during the period of September 15 - October 1.

According to the historian Agathangelos, St. Hripsime and her companions, running away from the Roman Emperor Dioklethianos, who started persecutions against Christians, reach to Armenia and find shelter in Vagaharshabad. However, before reaching Vagharshapat they stop at the Mountain Varak, which is to the southeast from the Lake Van. Taking off from her neck the relic of the Lord's Wooden Cross, St. Hripsime gives it to the praying monks living on the mountain and asks them to preserve it in one of the caves. Thus, the sacred relic remains hidden till the seventh century.

In 653 A. D. the monk Todik and his disciple Hovel pray at the Mountain Varak and ask God to show the place of the relic. Suddenly 12 bright columns appear around the mountain and the sign of the Cross is seen among the columns. For 12 days the bright columns remain visible even from distant sites. This joyful news spreads everywhere.

Nerses the Creator Catholicos who was the Catholicos of All Armenians of that period, and Captain Vard, son the Knight Theodoros, learning about that miracle, go the Mountain Varak to personally witness it. With the support of the Armenian people the Pontiff builds a magnificent church, which in honor of the miracle is named Holy Cross Church. The Pontiff Nerses also writes the marvelous church hymn "By means of the most powerful sign", which is sung in the churches on the day of the feast.

The sacred relic remains at the Mountain Varak till 1021 A. D. Later the Armenian King Senekerim Artsrouni brings the relic to Sebastia. After the latter's death the relic is again transferred to its old place and remains there until 1651 A. D. when the relic is taken to Khoshab. In 1655 A. D. the relic is placed in the Church of Holy Godmother, in Van, which is renamed to Church of Holy Sign. The relic was preserved there till 1915 A. D.

As Christians living in the 21st century, hearing these rich historical accounts deepen our appreciation of the perseverance of those early Christians who recovered the Holy Cross, the most precious and central symbol of our faith. They connect us to our religious past. However, this year, as we celebrate the feast day and watch the beautiful ceremony unfold, we might ponder not only past events, but focus on the meaning of the Cross itself in our present lives.

Is it only a symbol, something we observe perfunctorily in crossing ourselves at a meal, or during church services? How do we integrate the true meaning of the Cross—Christ's suffering, crucifixion, death, and resurrection—into the fabric of our lives?

Monday, September 24, 2018

Commemoration of Sts. Mamas, Piliktimon and Simeon Stylite

St. Mamas was born in the town Gangra, of the Province of Paphlagonia, in a poor Christian family. During persecutions against Christians his parents are imprisoned and exiled to Caesaria. While giving birth to her son, his mother passes away. A pious Christian woman adopts Mamas and brings him up. Already at the age of 15 he is imprisoned and subjected to severe torments for being a devout Christian and brave preacher. Overcoming the hardships he lives an isolated life on the Mountain Argos. St. Mamas devotes all his life to serving the poor, but is betrayed and handed over to the judge. After severe torments St. Mamas is killed by means of trident in 273 A. D.


St. Piliktimon (Philomenos), known in Greek and Latin sources also by the name Filomenos, was a grain trader. For being Christian he is imprisoned during the period of persecutions by the King Avrelios. He is subjected to torments and is finally martyred in 274 A. D.

St. Simeon the Stylite was born in 390 A. D. in Caesaria. He has been a shepherd. One day he goes to the church and, not understanding the meaning of the Gospel passage read that day, asks about it an old man standing beside him. The old man explains him the meaning of the Gospel passage saying that the passage is about abstinence, that is, it is by means of ascetic way of life, deprivations and fasting that the people should deserve the heavenly kingdom. Thinking over the old man's words Simeon leaves for the Hata Province, of Syria, where he is isolated in a monastery for three years, after which he asks God to grant him the grace to preach and heal. Seeing that the visitors and the sick cause too much trouble to him, Simeon digs a deep dungeon, from where only his head was seen while preaching, and later he climbs up a high column. He lives without a shelter, only standing or kneeling during the day, and only taking Holy Communion as food once a week. For many years he stays on the column and preaches and heals many sick people by means of prayers.



ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 23 Սեպտեմբեր 2018



Տօքթ. եւ Տիկ. Զրայր եւ Մանուշ Տէր Գեորգեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր՝

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ
(DIKRANOUHI ANGALATIAN)

Մահուան 4-րդ տարելիցին առիթով
հնչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ հօր՝
ՕՆՆԻԿ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ
(ONNIG ANGALATIAN)

Մահուան 13-րդ տարելիցին առիթով
ԵՒ

իրենց սիրեցեալ եղբօր՝
ՅԱԿՈՒՐ ԱՆԿԱԼԱԹԵԱՆԻ
(HAGOP ANGALADIAN)

Մահուան 9-րդ տարելիցին առիթով
ԵՒ

իրենց սիրեցեալ մօրաքրոջ՝
ՌԵՓԵՔԱ ԴՈՅԱԾԵԱՆԻ
(REPECCA BOYADJIAN)

Մահուան 10-րդ տարելիցին առթիւով
հնչպէս նաեւ՝

**ԱՆԿԱԼԱԹԵԱՆ, ՊՈՅԱԾԵԱՆ
ԵՒ ՏԵՄԻՐԾԵԱՆ
(ANGALATIAN, BOYADJIAN, & DEMIRDJIAN)
Ընտանիքներու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ**



**Պրն. Յարութիւն Պալեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իբր սիրեցեալ կնոջ՝**

**ՍՐԲՈՒՅԻ ՊԱԼԵԱՆԻ
(SERPOUHI BALLIAN)
Յոգւոյն ի հանգիստ
(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան»
սրահին մէջ)**



ՆՈՒԻՐԱՏՈՒՆԻՑԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of September 2018 have been received with great
appreciation*



CHURCH:

**Manoir Gouin Seniors \$121, Mr. Aram Minasyan,
Dr. Arto Demirjian \$100,
Mr. & Mrs. Manouk & Siran Jamgotchian \$50.**

“GOMIDAS” TBRATZ TASS 60th ANNIVERSARY:

Mr. Haroutioun Ballian \$250

In Lieu of Flowers:

THE LATE ALIS ZOZIKYAN:

Dr. Arto Demirjian \$100

FEAST OF ASDVATZATZIN:

Mrs. Marie Astghig Yazedjian \$30

HOKEHANKISD:

MERELOTS / REMEMBERRANCE DAY:

THE LATE GRIGORYAN FAMILY:

Mr. & Mrs. Hrant Grigoryan \$20

THE LATE SERPOUHI BALLIAN:

Mr. Haroutioun Ballian \$100



Website: www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,

Չաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել
Եկեղեցւոյ **Կայքէջը - Website www.saintgregory.ca,**

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու
վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ
նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ
կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

Website: www.saintgregory.ca,

*where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations and
benefiting from other possibilities of our Website.*

Thank you for support!

Parish Council
Ծիսական Խորհուրդ



Տաղաւար Տօներ

ԵՆ Յառաջիկայ Ձեռնարկներու

Խաչվերաց – Կիրակի, 16 Սեպտեմբեր 2017
**Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ
28, 2018**
**Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր
2018**
**Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ –
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

**Feast of the Exaltation of the Holy Cross –
Sunday, Sept. 16th, 2018**
**Annual Bazaar – Saturday & Sunday -
October 27 & 28, 2018**
**Children’s Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018**
**Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018**



ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Ս. ՊԱՍԿԱԴՐՈՒԹԵԱՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը
ԷԼԻ ՇԱՄՄԱՐԻ

ԵՆ

ՀՈՒՐԻԿ ԹԱՐԱՔՃԵԱՆԻ

Պսակադրութեան ուրախ առիթով
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն
պսակադրեալ զոյգի
Ծնողներուն եւ հարազատներուն,
մաղթելով որ Աստուածային Օրհնութեան արժանանան
իրենց կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATUALTIONS ON THE WEDDING CEREMONY

*The Pastor & The Parish Council
Of the
St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Wedding Ceremony
Of*

ELIE CHAMMAH

&

HOURIG TARAKDJIAN

*Extend their heartfelt congratulations
to their parents and family,
wishing them to receive
God blessing throughout their life.*





**Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները
փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066,
մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Ծիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

**If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Parish Council



Կազմակերպութեամբ՝
Քեպէքի Հայ Համայնքի Միացեալ Մարմնի
Հովանաւորութեամբ՝ Գանատայի մօտ Հ.Հ. դեսպանատան

Հայաստանի Անկախութեան 27-ամեակի Տօնակատարութեան



օրուան պատգամաբեր՝
Գանատայի մօտ Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան՝
Տիար Լեւոն Մարտիրոսեան

Գեղարուեստական յայտագիր
Մասնակցութեամբ
Հանրածանօթ եւ սիրուած երգիչ՝
Մակիչի



Շաբաթ, 22 Սեպտեմբեր 2018-ին, երեկոյեան ժամը 7-ին
Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրոնաճեան» սրահին մէջ
(3400 Rue Nadon, Montréal, QC H4J 1P6)

Հիւրասիրութիւն ձեռնարկի աւարտին

Մուտքը ազատ



Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ

2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Չեռնարկ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Առնիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Ս. Գրիգոր Լուսավորիչ
Մանկական Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

**Փորձերը պիտի կատարուին Կիրակի օրերը
Վերսկաման թուականը կը հաղորենք մօտ առենեն:**

La nouvelle saison débutera

**La date du commencement des pratiques vous sera
communiquée prochainement.**

**Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:**

**Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.**

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -12 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-12 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուցներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Վերսկսման թուականը կը հաղորդենք մօտ ատենէն:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քինյ. Մարգարեան



In a pleasant and friendly atmosphere, the
children will learn:

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

Restart date will be announced shortly.

*For more information and registration call to the
Church office
(514) 279-3066*

Fr. David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal





«Կոմիտաս» Դպրաց Դասի
 Հիմնադրութեան 60-Ամեակի
 Տօնակատարութիւն
 “Gomidass” Choir the 60th
 Anniversary Celebration



Հովանաւորութեամբ՝
 ԳԱՆԱՏԱՅԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
 ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

Under the Auspices
BISHOP ABGAR HOVAGIMYAN

Կազմակերպութեամբ՝ / «ԿՈՄԻՏԱՍ» ԴՊՐԱՅ ԴԱՍԻ
Organized by: / “GOMIDAS” CHOIR



Մասնակցութեամբ՝ Հանրաձանօթ Երգիչ
ՄԱՐԹԵՆ ԵՕՐԿԱՆՏԻ
 ԵՒ DJ SAKO-ի



With Participation: Famous Singer
MARTEN YORGANTZ & DJ SAKO

Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը
 8-ին, Եկեղեցւոյ
 «Մարի Մանուկեան» սրահին մէջ:
 Saturday, November 10, 2018 at 8:00 pm
 in the Church “Marie Manoogian” hall.

Ճաշերու Պատրաստութեամբ՝
 «Տիկնանց Յանձնախումբ»-ին

Supper Preparation: by “Ladies Committee”

Տոմսերու եւ տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել.

For reservation please call:

- Մարալ Պօղոսեանիս/ Maral Boghossian (514) 279-3066
- Արա Կերիքեանիս/ Ara Gerikyan (450) 682-5565 կամ / or
 (514) 947-4524 կ.ե. ժամը 5-էն ետք / After 5 pm

Սուղի Նուէր \ / Donation \$50

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
 Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԿԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

**BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS**

BY FR. DAVID MARGARYAN

**Տեղի պիտի ունենան Հինգշաբթի՝ Երեկոները
ժամը 7-ին Եկեղեցւոյ մէջ
Վերսկսման թուականը կը
հաղորդենք մօտ ատենէն:**

**Every Thursday at 7:00 pm at the
Church.**

The restart date will be announced shortly.

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու**

**Տ. Դակիթ Բինյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած Աստուածաշնչական Նիւթերուն:**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

**We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be
served during the sessions.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:**

Cordially we expect everyone's presence.

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱԶԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Արմինե Շիրինեան

Շաբաթ 27 եւ Կիրակի 28 Հոկտեմբեր 2018
Ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ
Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւն



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին երեքշաբթի օրը,

երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական անդիպում մը ունենալու

Ճիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**